

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի կազմակերպամեթոդական բաժնի փորձագետ Նարե Ոսկանյանի կողմից 2020 թվականի հոկտեմբերի 2-ից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 2-ը ներառյալ իրականացված աշխատանքների վերաբերյալ

Ես՝ Նարե Արտակի Ոսկանյանս, Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի կազմակերպամեթոդական բաժնում որպես փորձագետ աշխատում եմ 2020 թվականի հոկտեմբերի 2-ին կնքված N 59 պայմանագրի համաձայն: 2020 թվականի հոկտեմբերի 2-ից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Իրականացրել եմ Պրոբացիայի ծառայության միջազգային իրավական փորձի ուսումնասիրություն («Միավորված ազգերի կազմակերպության՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատժամիջոցների վերաբերյալ նվազագույն կանոնները»՝ Տոկիոյի կանոններ, «Պրոբացիայի մասին Եվրոպայի խորհրդի կանոններին» վերաբերյալ ԵԽ Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)1 հանձնարարական և այլն)՝ ներպետական ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների մշակման նպատակով:

2. Պրոբացիայի ծառայության գործունեության ոլորտում իրականացված ուսումնասիրության հիման վրա առաջարկություններ եմ ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ քրեակատարողական օրենսգրքում և «Պրոբացիայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

3. Մշակել և ՀՀ արդարադատության նախարարություն եմ ներկայացրել պրոբացիայի շահառուների վերասոցիալականացմանը, հասարակությունում վերահնտեգրմանը և օրինապահ վարքագիծ ձևավորելուն ուղղված միջոցառումների և ծրագրերի իրականացման մոդելներ:

4. Ուսումնասիրել և եզրակացություն եմ ներկայացրել Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության շրջանակներում իրականացված՝ Հայաստանում պրոբացիայի ծառայության զարգացմանն ուղղված աջակցության ծրագրի վերաբերյալ:

5. Աջակցել եմ Պրոբացիայի ծառայության ղեկավար անձնակազմի, պրոբացիայի ծառայողների մասնագիտական վերապատրաստման ձեռնարկների մշակման աշխատանքներին:

6. Ներգրավվել եմ պրոբացիայի շահառուների վերասոցիալականացմանն ուղղված սոցիալ-հոգեբանական աշխատանքներին, ինչպես նաև պրոբացիայի շահառուներին ցուցաբերել եմ իրավաբանական աջակցություն:

Փորձագետ  
Նարե Ոսկանյան՝  
02.10.2021թ.

